երբեք չնշանակեր բնագիր կամ լեզու]։ Երբեք տեղ մը չտեսնուիր որ Զենդ անուն գիրք մ'եղած ըլլայ իբր Աւեստայի մեկնութիւն. բայց անպատճառ կային բազմաթիւ գործեր, որք կը մարմնաւորէին աւանդական Զենդը եւ այս գործերէն է որ եղած են թարգմանութիւններ ու մեկնութիւններ, որք հասած են մեզ։ Այս տեսակ գործերէն կային արդէն պարթեւական ժամանակամիջոցին. վասն զի Ե՞՞ դարու հայ մատենագիր մը, Եղիշէ, նշանաւոր հատուածի մը մէջ կը յիշէ Պահլաւէկ կամ Պահլաւիկ կրօնական գրականութեան այն ճիւղերուն մէջ, որոնց տիրացած պէտք էր ըլլալ մեծ քուրմ մը (այսինքն՝ Դէնդետ կամ Մոպետ)։ Արդ՝ այս Պահլաւիկ բառն է որ, միջին պարսից եւ արդի ժամանակամիջոցին, ամէն հին բանի համար կիրարկուելով մինչեւ իսկ Սասանեանց լեզուն ալ նշանակեց, եւ Սասանեանց ժամանակ իսկ կը պահէր իւր սկզբնական իմաստը եւ կը կիրարկուէր Պահլաւ կամ Պարթեւ (Parthava) լեզուին եւ գրականութեան մէջ» (Annales A. chp. II. — C. p. XCIV—V)։

# ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ԹԱՒՐԻԶԻ

*Ցուցակ ձեռագրաց Ս. Աստուածածին եկեղեցւոյն Ղալայի կամ Բերդաթաղի:*

(Շարունակութիւն)

## 9.

## ՄԵՂԵԴԻՔ

### ՌՃԼԸ = 1689։

*ԹՈՒՂԹՔ՝ 36: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10×8×0,7 սմ.: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, շատ մաքուր: – ԳԻՐ՝ մանր բոլորգիր. տող՝ 15. Թանաք սեւ. սկզբնատողերը կարմիր եւ ոսկեզօծ: – ՆԻՒԹ՝ ողորկ եւ սպիտակ թուղթ: – ԿԱԶՄ՝ կաշեպատ խաւարաքարտ, թղթապանակի ձեւով, երեսը ոսկեզօծ: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ մաքուր: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 1ա-3ա, 36ա-բ: – ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐ՝ շատ կան. ամէն էջ ունի զարդարուն շրջանակներ, մեծադիր պատկերներ սրբերու՝ էջ 3բ, 14բ, 20բ, 23բ, 33բ: Բոլորն ալ շատ գեղեցիկ ու շատ արուեստաւոր: – ԳՐԻՉ Պետրոս. ստացող՝ Տիրացու Աբրիհամ. Թուական ՌՃԼԸ — 1689 տեղ Կ.Պոլիս: Ծաղկող Գրիգոր: – Ձեռագիրը այժմ սեփականութիւնն է Մեծ. Խաչիկ աղա Սարաճեանի:*

Ձեռագիրս կը պարունակէ Տօնական օրերուն երգուած եկեղեցական մեղեդիները՝ խազերով։ Ամենէն վերջը կայ Տաղ Ս. Կարապետի։

Յիշատակարան. Էջ 3բ կնիք մը՝ սա մակագրութեամբ. «քհ. ծռ. պետրոս վզպտ»։

Էջ 33բ. «Զպատկերահան գրիչըրն Յիշեսջիք ի տէր ով հարք եւ եղբարք»։

Գլխաւոր յիշատակարան. Էջ 35ա. Զհաւաքիչ սուրբ տաղս տանաւս։ Եւ մեղօք պետրոսին որ միայն զանուանս ունիմ եւ զգործն ոչ այլ յօտարացեալ 'ի նս անուանէ. եւ հեռացեալ եմ ի բարի գործոց Աղաչեմ Աղաչեմ զհանդիպողք այսմ գրեիս Մեծով եւ ողորմիւ յիշել զանարժան զծառս, եւ զսուրբ յիշեալ լիցիք 'ի տէ մերմէ յիւ քէ։ Ամէն Ամէն Ամէն։ Արդ գիրեցաւ մեղեդիքս կոստանդինուպօլիս 'ի դուռն նր սարգսի ամէն թվին ռճլը. բարով վայելեսցէ տիրացու աբրհամին։

## 10.

## ՅԱՂԱԳՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆՑ

### 1826։

*ԹՈՒՂԹՔ 56. գրուած էջ 1–100: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21×17×1 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, շատ մաքուր: – ԳԻՐ՝ նոտր. տող 19-20. Թանաք սեւ. վերնագրերը սեւ կամ վարդագոյն: – ՆԻՒԹ՝ հաստ թուղթ: – ԿԱԶՄ՝ նոր կիսակաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ մաքուր: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 10: – ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐ չկան. բայց սկզբնատառերը գեղեցիկ թռչնագրեր են. սկիզբը կայ Ս. Մեսրոպի մեծադիր պատկերը: — ԳՐԻՉ եւ անծանօթ. Թուական 1826? Ձեռագիրս այժմ սեփականութիւնն է Պր. Տիգրան Մելիք-Զոհրաբեանցի:*

Մատեանս է «Յաղագս Աստուածային բացարձակ կատարելութեանցն այսինքն Աստուածային ստորոգելեացն»։ որուն համար գրքին առաջին էջին վրայ կ'ըսուի. «Արդ գուղնաքեայ բանս թարգմանեալ եղեւ 'ի լատինացւոց բարբառէ 'ի Հայոց լեզու 'ի ձեռն ուրումն լէհացի Սոփինա կրօնաւորի. ի փառս քի այ յուսոյն մերոյ Ամէն»։

Յիշատակարանք չկան. միայն էջ 66 կնիք մը սա մակագրութեամբ «ایستفان Ս.Նո» (այն է Ստեփան). եւ ամէնէն վերջը՝ էջ 100, թուական մը. «յամի ան 1826»։

## 11.

## ԱՂՕԹԱԳԻՐՔ ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻՆ ԱՍՈՐՈՅ

### ?

*ԹՈՒՂԹՔ 68: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15×10×2 սմ.: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն, ոչ կանոնաւոր: – ԳԻՐ՝ նոտր: Թանաք՝ սեւ. սկզբնատառերը երբեմն միայն կարմիր. անզարդ. տող 17-18: – ՆԻՒԹ՝ թանձր անողորկ թուղթ: – ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ միջակ. սկիզբէն թերթեր ինկած: – ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ 2 էջ. – ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ եւս չկայ բնաւ: – ԳՐԻՉ եւս անծանօթ: Ձեռագիրս այժմ սեփականութիւնն է Պր. Տիգրան Մելիք-Զոհրաբեանցի:*

Մատեանս կը պարունակէ բաց ի Սրբոյն Եփրեմի աղօթքներէն, որ գրքին մեծագոյն մասը կը բռնեն, այն է էջ 5ա—51ա, նաեւ քանի մը աղօթքներ Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբ, Վարդան Վարդապետի մաղթանք առ Ս. Աստուածածին (Ածածին ամենօրհնեալ, պարզատանս մեր ընկալ) եւ ուրիշ քանի մը կիսատ աղօթքներ։

Գիրքը ոչ մի յիշատակութիւն ունի։

digitised by A.R.A.R.@

# 12.

## ԱՂՕԹԱԳԻՐՔ

### ՌՃԺԸ — 1669.

*ԹՈՒՂԹՔ 242, էջ 484: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 13×9,5×4 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: — ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր. մէկ-երկու էջ նօտր. յետոյ նորոգուած, թանաք սեւ. վերնագրերը, սկզբնատառերն ու սկզբնատողերը աղիւսագոյն եւ կարմիր: Տող 17: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտէ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ բաւական գործածուած. սկիզբէն պակաս. թերթերը դեղնած եւ աղտոտ: — ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ, լուսանցազարդեր, թռչնագրեր եւն չկան: — ԳՐԻՉ՝ Աւետիս. ստացող Տէր Եղիա աբեղայ. թուական ՌՃԺԸ — 1669: — Ձեռագիրս այժմ սեպհականութիւնն է Պր. Ալէքսան Տէր-Օհանեանի:*

Մատեանս կը պարունակէ հետեւեալ աղօթքներն ու ճառերը.

1. Յովհաննէս վարդապետի Տէր ամենակալ Ած հզօր՝ էջ 1—17. 2. Մեղրիկ վարդապետի Յաղագս աղօթից եւ գղջման մեղաց. Տէր տէր պարգեւօղ ողորմութեան. էջ 17—28. 3. Աղօթք Մեղրկայ. Աւրհնեալ ամենայն երրորդութիւն. էջ 28—41. 4. Աղօթք Անաստասայ քահանային. Տէր մի սրտմտութեամբ յանդիմաներ. էջ 41—68. 5. Աղօթք մաղթանաց. Տէր նայեաց ի մաղթանս իմ եւ ի պաղատանս. էջ 69—97. 6. Նորին Հսկողի ի նոյն գրոց բանք աղերսանաց առ որ երրորդութիւնն. Տէր Ած բարերար անոխակալ. էջ 98—107. 7. Այսք հաւատացեալ ողորմեա, ամենեցուն Ած. Ամենակալ եւ անքննին անձութիւն. էջ 107—109. 8. Մեսրոպայ վրդպի ասացեալ աղօթք երեք ժամուց աւուրն, ընդդէմ դիւաց. Հոգի որ այ, հոգի քո ան մերոյ. էջ 109—113. 9. Գառնեցւոյն ասացեալ Աղօթք ի հոգին սբ. Հոգի այ ան ճշմարիտ հոգի իմաստութեան. էջ 113—117. 10. Սարկաւագ վրդպին ասացեալ Աղօթեա առ հոգին սբ. Անստուերլոյս եւ գոյացուցիչ. էջ 117—126. 11. Աղօթք Յովհաննու Հայոց վրդպտի ասացեալ, մականուն Սարկաւագի. Հայր ան մերոյ յի քի որ զամ գոյացուցեր. էջ 126—136. 12. Նորին Սարկաւագ վրդպտի աղօթք առ հայր. Արարիչ իմանալեաց եւ զգալեաց. էջ 136—151. 13. Աղօթք վեցերորդ ժամու աւուրն. Թագաւոր հզօր ապաւէն. էջ 151—155. 14. Գառնեցւոյ՝ Հայր երկնաւոր ան ճշմարիտ հայր հանդերձելոյ. էջ 155—159. 15. Նորին Յովհաննու ասացեալ աղօթք իններորդ ժամուն առ որդին. Որդի այ ան ճշմարիտ. որ վասն փրկութեան. էջ 159—166. 16. Մեսրոպայ վարդապետի Աղօթք իններորդ ժամու. Տէր բարերար եւ բազմագութ. էջ 166—178. 17. Աղօթք երեկոյին ժամուն Մեսրոպայ. Ած անեղ եւ յաւիտենական. էջ 178—183. 18. Յովհաննու Գառնեցւոյ աղօթք վս գղջման ժամուն. Աղաչեմ զքեզ տր. էջ 183—186. 19. Գրիգորի Նարեկացւոյ Ած յաւիտենական բարերար. էջ 186—189. 20. Բանք աստուածայինք պիտանի ամ կրօնաւորաց, Անանիայի Հայոց վրդպի ասացեալ. Երեւեցո տէր զնորհս քոյ. էջ 189—206. 21. Եփրեմի՝ Ո՞ր անեղդ ես եւ անստեղծ. էջ 206—217. 22. Աղօթք երանելւոյն Մովսէսի Քերթողւոյ ասացեալ. Աղաչեմ զքեզ տէր, էջ 217—222. 23. Սկիզբն խոստովանութեան յայտնութիւն գաղտնեաց եւ պատմութիւն յանցանաց. Գրիգորի անյաղթ դիտնականի եւ հոգեմատեան հաւատոյի, որ էր բնակեալ յանապատին որ կոչի յեսաւանց. Արի ի խոստովանութիւնն ի գիշերի. էջ 222—237. 24. Մեղրկայ Յիսուս որդի Այ արարիչ եւ տէր. էջ 237—247. 25. Գառնեցւոյ՝ Աստանօր պիտոյ է մեզ ողբ հառաչանաց. էջ 248—258. 26. Տես տէր զաղաւապանս իմ եւ զցաւս հոգւոյ իմոյ. էջ 258—342. 27. Խրատ միակեցաց. Հայրն Սիւղիանոս նստէր ընդ եղբարս. էջ 343—379. 28. Յովհ. Գառնեցւոյ Յաւիտենից ած եւ արարիչ (աղօթք Կիր. բշ. գշ. դշ. աւուրց) էջ 379—387. 29. Տեսիլ սրբոյն Պօղոսի. Ես Պօղոս աղգմամբ սբ հոգւոյն. էջ 387—427. 30. Նորին հսկողի աղօթք ի սբ ածածինն. Երկնաւորին դուռն. էջ 427—431. 31. Նորին աղօթք միջնորդութեամբ երկնային զօրաց. Սուրբք եւ սիրեցեալք. էջ 431—434. 32. Աղերսանք ի դէմս սբ Ածածնին. Անարատ մաքուր անշաղախ. էջ 434—465. 33. Ողկերերանի Անակիզըն ած եւ անհասանելի. էջ 465—478. 34. Նորին երկրպագեմք քեզ տէր ած մեր. էջ 478—482.

Յիշատակարաններ. Էջ 67. Ո՛վ դու ճգնաւորդ Տէր Եղիայ, եւ կրօնիւ աբեղայդ ընթերցիր եւ կարդայ, եւ առաւել քան զառաւել արտասուեա զաւիս աչխատօղս. աւետիս. յիշեա՛ և մեզաց թողութի հայցեա. ինձ որ աղքատեալ անկայ. եւ յաւիտենից փրկեցայ ու անողորմալի գալոյ. Ո՛վ ով որքայ/ց աքքայ ազատութիւք անստարայ զապաւեկալ անձն իմ կանխեա. եւ զհոգւոյս վէրս բժշկեայ եա 'ի քեզ ով յուսացայ. դու ով կրկին 'ի յիս գթեայ. եւ զառաջին փառն շնորհեայ աւետիս գծօղի առ այս.

Էջ 342. ժճռ. էհչ. ծշր. գխն. բմս. բիմ. գրիչ յիշէլ աղաչեմ. հանգերձ ծնօղօք եւ հարազատօք. եւ յիշօղքդ յիշեալ լիջիք. (Այն ծածկագիրը կը մեկնուի Աւետիս, որուն վեց տառերը ճիշդ այն պակասներն են, որ պէտք է լրացնել վերի վեց երրեակներուն մէջ, զանոնք ծանօթ (-ժճռ, էհչ—, եծշր եւն) քառեակներուն վերածելու համար):

Էջ 482 (Գլխաւոր յիշատակարան). ըստացօղ սր աղօթամատյցիս, հեզահոգի ով եղիէն, կրօնաւոր աբեղին, յիշատակ հոգւոյ իւրոյ եւ ծնօղացն, հօրն յոհաննէսին եւ մօրն եւգինեայ, եւ կուսակրօն եղբօրն Գրգր ոսկզին եւ ամ հարազատացն. կենդանեացն. եւ ննջեցելոցն: (Նօտր աղիւսագոյն գրերով, օտար գրչէ) զարձեալ: Յիշեցէք եղէայ կրօնաւոր: Աբեղէն վայ որ անուամբս եմ եւ ոչ գործովս. յիշօղք 'յիշեալ (նոյն առաջին գրչէն) ընդ ասցին եւ սէւք աշխատօղս 'ի սմին, աւետիս լոկ անուն քհնյս յիշեցէք եւ ած զձեզ յիշեսցէ թվին. ռ. ճ. եւ ժը:

Էջ 484 (Օտար գրչէ)! թվ ռճկթ յուլիսի գ. ենի գնեա անգրէաս? եպնկս կեւիզափել? Քրիսի թվին ռճիգ գրեցաւ:

## 13.

## ՏՕՆԱՑՈՅՑ ԵՒ ԽԱԶԳԻՐՔ

?

*ԹՈՒՂԹՔ՝ 153: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 10×7,5×3 սմ.: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ մաքուր. միասիւն: – ԳԻՐ՝ մանր բոլորգիր. Թանաք սեւ. վերնագրերը, սկզբնատողերն եւ սկզբնատառերը կարմիր. տող 18: – ՆԻՒԹ՝ մագաղաթ: – ԿԱԶՄ՝ թաւշապատ խաւաքարտէ, եռեւը եւ բոլորտիքը սեւ կաշիով. վրան արծաթեայ թելով հիւսուած կապիչ: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ սկիզբէն եւ վերջէն 1-2 թերթ պակաս. մնացեալը մաքուր: – ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 6ա-բ, 29բ, 37բ, 44բ. 51բ, 65ա-բ, 72բ, 98բ եւ 123բ միւսները յետոյ գրուած: – ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐՆ ու խորանները քիչ եւ շատ հասարակ. զարդագրեր չկան – ԳՐԻՉ եւն անծանօթ: Յիշատակարան եւ ոչ մէկ հատ – Ձեռագիրս Վանեցի Յովհաննէս անուն անձը բերած է Սիպերիայէն եւ այժմ սեպհականութիւնն է պպ. Կարապետ, Բագրատ եւ Սիսակ Յովհաննէսեանց:*

Ձեռագիրս կը պարունակէ էջ 1—98ա Տօնացոյց. էջ 99ա—153բ խազգիրք (կանոնագլուխք, Թագաւորք ապաշխարութեան եւ Մարտիրոսաց, Ալէլուք [illegible], Կիրակամուտի իւղաբերից, Առաւօտու երգեր, ժամամուտք, ճաշու մեսեդիք եւ [illegible]): Ասոնցմէ զատ օտար գրչէ նախկին պարապ էջերուն վրայ գրուած են, էջ 18ա՝ Գովելկապի աղօթք, էջ 44բ՝ զանազան հաւցէներ բոլորովին նոր ժամանակի, 72ա՝ աղօթք մը, 72բ՝ տաղ մը, 80ա—բ՝ Ողբ առ խաչին, 123ա՝ նոյնպէս նոր հաւցէ մը. այս բոլորը նօտր կամ շեղագիր:

## 14.

## ԱՌԱԿԱԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ, ԲԺՇԿԱՐԱՆ ԵՒ ԼՈՒՍՆԱՑՈՅՑ

(ԺԷ. դար.)

*ԹՈՒՂԹՔ՝ 203: – ՄԵԾՈՒԹԻՒՆ 20×15×3,6 սմ.: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: – ԳԻՐ՝ Առակագրքի մէջ նօտր. Աղեքսանդրի պատմութեան եւ Բժշկարանի մէջ բոլորգիր. իսկ լուսնացոյցը մանր նօտր: – ԹԱՆԱՔ սեւ, բայց գլուխները, սկզբնատառերը, Աղեքսանդրի կաֆաները, լուսնացոյցի եւ բժշկարանի ցուցակներուն մէջ զանազան թուահամարներ եւ նշանագիրներ կարմիր. վարդագոյն, աղիւսագոյն եւ գեղեցիկ կանաչ: – Տող՝ 23-25: – ՆԻՒԹ՝ թուղթ: – ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակէ: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ սկիզբէն եւ վերջէն, նաեւ 171 էջէն քանի մը թերթ պակաս է. մնացեալը տեղ տեղ կեղտոտուած: – ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ՝ էջ 51ա-53ա, 102ա, 161բ, 183բ, 184ա, 193ա եւ 196բ, որոնցմէ մէկ քանին յետոյ գրչափորձերով լցուած: – ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐ եւն չկան. սկզբնատառերն ալ հասարակ գլխագրով են միայն: – ԳՐԻՉ եւն բոլորովին անծանօթ, որովհետեւ տող մ'անգամ յիշատակութիւն չկայ: – Թուականի միակ հետքը կը գտնուի լուսնացոյցներուն մէջ որոնք շինուած են հայոց ՌՁԴ–ՌՁԷ եւ Քրիստոսի 1635-8 թուականներուն վրայ: – Ձեռագիրս այժմ սեպհականութիւնն է Պր. Սիսակ Բժշկեանի:*

Ձեռագիրս կը պարունակէ՝

1. Էջ 1—50բ՝ Առակագիրք, որուն առաջին թերթերը պակսելով խորագիրը կորսուած է. առակները վերնագիրներ եւ թուահամարներ չունին, եւ առանց նոր տողի փոխանց կը շարունակուին մինչեւ վերջ՝ առանց որեւէ յիշատակութեան:

2. Էջ 52ա—101բ "Պատմութիւն Աղեքսանդրու", որուն սկիզբէն եւ վերջէն պակաս է. սկիզբն է "քանզի առեն զնեքտանեբոս. վերջին թագաւոր եգիպտացւոց" եւ վերջը "ի սարսափման մեհենի աստուածոյն բարբառաւ ասելով զարծիւն վայրենի": Ասկէ զատ պատմութեան մէջերն ալ պակաս են. որովհետեւ քանի տեղ տառնեակներով տողեր բաց թողուած են՝ յետոյ գրելու համար, մանաւանդ ներմուծուած կաֆաներէն յետոյ:

3. Էջ 102բ—170բ՝ բժշկարան: Այս գրուածքը երկու որոշ մասերէ կը բաղկանայ. առաջին մասն է (էջ 102բ—161ա) բժշկական բառարան, որուն մէջ դեղերը շարուած են այբուբենական կարգով առանց աղիւսակներու մէջ եւ անոնց դիմացը զանազան անուանութիւններ. իւրաքանչիւր բառ նշանակուած է 5 լեզուով՝ Հայոց, Հոռոմ, Ֆռանկի, Արաբի, Պարսից. անոնց դիմացը տարբեր աղիւսակներու մէջ՝ "Որդինակն, Աղէփն, Բնութ, Զօրն, Պտուղ" որ ցիշէ դեղերուն զօրութիւնը եւ լուծմանցը վրայ թէ ի՞նչ բանի կը ծառայէ: Ընդ ամէնը կայ 354 բառ:

Երկրորդ մասը (էջ 162ա—170բ) կը պարունակէ բժշկական պատուէրներ, դեղագիրներ, [illegible] պատրաստութեան ձեւքերը եւ 9 էջ (27 սիւնակ) դեղերու անուններ՝ իւրաքանչիւր [illegible] առանձին հիւանդութեան համար: Այնպէս որ այս մասը առաջինին հակադարձն է. քանի որ առաջինին մէջ կը ցուցուի թէ այս ինչ դեղը ո՛ր հիւանդութեան օգտակար է, իսկ երկրորդին մէջ կը ցուցուի թէ այս ինչ հիւանդութեան դէմ ինչ դեղեր կան:

4. Լուսնացոյց տախտակներ հայոց ՌՁԴ—ՌՁԷ եւ Քրիստոսի 1635—1638 թուականներուն վրայ, սկիզբէն եւ վերջէն պակաս է. այժմ կը բռնէ ձեռագրին 171ա—203բ էջերը. ընդ ամէնը 32 տախտակ, որոնց իւրաքանչիւրին վրայ գրուած է "Աղիւսակս ցուցանէ զէ՛ մոլորական աստղն թէ որ կենդանակերպի եւ որ յատուածին եւ որ մասի են, հայեցք լուսնին հետ Է աստղին եւ գլխոյն եւ ագւոյն. Հայեցք Է աստղին [illegible] են":

Յիշատակարան. Էջ 50բ. Յի՛ Քի ծառայ Նեգիայ. Ամէն.

Էջ 51ա. Յիշատակ է հակիմարանս Այս առագրին ձեռագրին վարդապետին որ եա իւր ծառայ գրապարին. օխտր կարգայ, առէ ած իւրն աղօթերցէ: Ամէն: (ուրիշ ձեռքէ) մկրտիչ քաղիկեան բժիշկեան: (ուրիշ) եա վաթան ծառայ:

Ասոնցմէ զատ էջ 51բ եւ 52բ կան հաշիւներ (1641 թուէն), 52ա քանի տողմոցին են, էջ 102ա գրչափորձ, բոլորն ալ օտար գրչէ եւ անպիտան:

## 15.

## ԲԺՇԿԱՐԱՆ

(1784-էն առաջ.)

*ԹՈՒՂԹՔ՝ 106: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 20,5×15×2,8 սմ.: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն: – ԳԻՐ՝ նօտր. Թանաք՝ սեւ, սկզբնատողերն ու սկզբնատառերը աղիւսագոյն եւ կարմիր. տող՝ 23-27: – ՆԻՒԹ՝ անողորկ թուղթ: – ԿԱԶՄ՝ կիսակաշի, խաւաքարտեայ: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝*

digitised by A.R.A.R.@

կազմը քրքրուած, բայց ամբողջութիւնը գոհացուցիչ: – ԴԱՏԱՐԿ ԹՈՒՂԹ, լուսանցազարդ եւ զարդագիր ընաւ չկայ: – ԳՐԻՉ, Թուական եւն անծանօթ: – Ձեռագիրս բերուած է Նոր-Նախիջեւանի մօտ գտնուող Չէքիսկ քաղաքէն եւ այժմ սեպհականութիւնն է Պր. Յարութիւնի եւ որդւոյն Պր. Գարեգնի Սարաֆեանց:

Ձեռագիրս է բժշկարան, կը պարունակէ էջ 2ա—91ա՝ զանազան դեղեր թուագրուած մէկէն մինչեւ 800 (ա – պ). էջ 92ա—100ա Ցանկարան հեքիմարանիս որ ճիւրաւ գտանիս զոր ինչ կամիս. էջ 102ա—բ բառարան բժշկական բառերու, սկիզբէն եւ վերջէն պակաս. էջ 103բ—104ա Ամսացուցց որ զինչ է պարտ ուտելոյ եւ պատրաստ կենալոյ օգուտ մարդոյ. Մնացեալը օտար գրիչներէ աւելցուած դեղեր, թըլըսմներ եւն:

Յիշատակարան. Էջ 1բ. Թվին ռճձլգ ին ամսեանն սէպտեմբերին Թին ես մհսի պաղտասարի որդի պաղտասարըս ընծայեցայ որդի օվանէս ձէ բարի զաւակ անէ. եւ բարի յիշատակ անէ. եւ խորին ծերութին ամէն. Թվին ռճձլգ ին ամսեան նոյեմբերի ժբին որդին իմ տէր ձէ բախտաւոր հոգին բարեխօս ըլլայ ամէն:

Թվին ռճձլեին ամսեանըն փետրվարի իբնին ես մհսի պաղտասարի որդի պաղտասարըս ընծայեցայ որդի թորոս ձէ բարի զաւակ անէ եւ բարի յիշատակ ու եւքս խորին ծերութին պարգեւէ ամէն: (Այսպէս կը շարունակուին ռճձլէ փետրվարի մէկին մինչեւ ռճձլթին նոյեմբերի ժբին գուստր իմ ալմաս, ռճձխբ ամսեան փետրվարի էին օվանէս, ռճծին հոկտեմբերի էին մանուէլ):

Կողքերուն վրայ կան շատ աւելի նոր գրութիւններ, որոնք աւելորդ համարեցի յիշել. բուն գրչէն յիշատակարան ընաւ չկայ. բայց այսմ ձեռագիրը 1784էն առաջ գրուած է:

(Շարունակելի) Հ. Ց. ԱՃԱՌԵԱՆ

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

### 1720—1775.

## ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ· ՍԱՐԱՖԵԱՆ

### ԵՒ ԻՒՐ ԺԱՄԱՆԱԿԸ

(Շարունակութիւն)

### 4.

*Սարգսի Սարկաւագութեան մէկ գրուագը: Կոլոտ Պատրիարքը վասն ուղղափառութեան կը հալածուի. Սարգիս կը խաղաղեցընէ ժողովուրդը եւ կը վերահաստատէ զԿոլոտ ի Պատրիարքութեան ընդդէմ Պետրոս Քիւթիւր Վ.ի:*

Յոյնք կ'աշխատէին Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքը Հայոց ձեռքէն առնուլ. Կոլոտ եւ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքները ("Սիոն", Երուս. 1866), Յակոբ Նալեան եւ Սարգիս՝ գործակցութեամբ իշխանաց յաջողեցան Յոյները ետ մղել: Նոյն միջոցին (1737) Կ. Պոլսոյ ժողովրդենէն ոմանք Կոլոտը Պատրիարքութենէ հանել կը ջանային, ըսելով թէ Կոլոտ Քաղկեդոնիկներն (ուղղափառները) եւ Ս. Լեւոնը չէր նզովեր եւ անոնց հետեւող Հայերը չէր հալածեր: Մինչեւ իսկ եկեղեցւոյ մէջ անոր վրայ յարձակեցան ուսերօք եւ բրօք, եւ կ'ուզէին զինքն սպաննել՝ "վասն ճանաչելոյ Նորին զճշմարտութիւն եւ հետեւելոյն նմա" ("Յիշատակարան" էջ 189): Ուզեցին զինքն հեռացընել եւ տեղը դնել Պետրոս Քիւթիւրը, որ յետոյ Ջահկեցի Ղազար կաթողիկոսին ալ հակառակորդն եղաւ: Քիւթիւր ռամիկ ժողովուրդն իր կողմը շահած էր, որոնց մեծամասնութիւնը կը կազմէին կեսարացի հարուստներ: Պահանջեցին որ Կոլոտ հրաժարի: Կոլոտ վախցաւ, փախաւ եւ Հարուստ Ըռասսեանց տունը պահուըտեցաւ: Գրիգոր Շղթայակիր, որ Կ. Պոլիս հիւանդ կը պառկէր, ինքզինքը եկեղեցի տանիլ տուաւ մահճակալի վրայ, եւ քաղցր բանիւ զիրենք ետ կեցընելու ջանաց այս ապերախտութենէն ընդդէմ Կոլոտի եւ սպառնացաւ որ եթէ Կոլոտը հանեն Պատրիարքութենէ, ինքն ալ կը հրաժարի: Ժողովուրդն ըստ երեւութին քիչ մը հանդարտեցաւ. սակայն քիչ ետքը դարձեալ ընդդէմ ելան Կոլոտի: Յակոբ Վ. Նալեան յեկեղեցւոջ խօսեցաւ անօգուտ: Կ. Պոլսոյ մէջ այն ատեն կեսարացիներն ուրիշներէ աւելի յանդուգն, ահարկու եւ ազդու էին. Սարգիս անոնց մեծամեծները խուցը հրաւիրեց, եւ զիրենք շահեցաւ, եւ անոնց ձեռօք ռամիկն համոզեց ետ կենալ այս ստահակութենէն, քանի որ իշխանք եւ Սարգիս Առաջնորդն այսպէս պատշաճ կը համարին: Այնուհետեւ Սարգիս միաբանեցաւ անոնց հետ, որ յաջորդ Կիրակին Գում Գափուի Ս. Աստուածածնի եկեղեցին քարոզ խօսի, եւ ազդէն այս վիճակին վրայ ողբալու ատեն, իրենք ալ լան, եւ առա զղջացեալ պահանջեն, որ իրենց Պատրիարքը Յովհաննէս Կոլոտն է, եւ Քիւթիւրը կը մերժեն: Այսպէս ալ կատարուի եւ Կոլոտ փառօք կը վերահաստատուի:

### 5.

*Սարգիս 1738ին Կեսարիոյ Աթոռէն կը հրաժարի: Պանդխտութեան Պետրոս Վ., Ումիտ օղլու Սիմոն Եպիսկոպոս ի Գաղատիա կաթողիկեայ Ֆ'ըրանս։ Միքայէլ օղլու Եղիա Վ.: Գաղատացի կաթողիկեայք չորս եկեղեցիներու կը տիրեն: Սարգիս 1738-1740 Առաջնորդ Գաղատիոյ, իր ընթացքը: Աւգերեան Ստեփ. Եպ.ի եւ*

digitised by A.R.A.R.@